ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» փետրվարի 2015 թվական N 7–Ա

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԳԱ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳԵՐԵԶՄԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրիում 2015 թվականի հունվարի 12-ին կատարված ողբերգության հետևանքով Ավետիսյանների ընտանիքի մահացած անդամների հուղարկավորության, հետագա արարողությունների կազմակերպման, գերեզմանի շինարարական աշխատանքների կատարման համար Գյումրու համայնքային ենթակայության <<Հավերժ Հիշատակ>> փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել 11.000.000 (տասնմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/3/1 գործառական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
3. Հանձնարարել <<Հավերժ Հիշատակ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ Գյումրի համայնքի ավագանուն ներկայացնել համապատասխան հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«06» փետրվարի 2015 թ.